

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրական մէջ:

Օտարազգացողքը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Менка“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են առն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միակ միջոց: — Ներքին տեսութիւն,
Նամակ երևանից: Ներքին լուրեր: — Արտաքին
տեսութիւն: Փոքր-Ասիայի Նամակ Թիֆլիսի-
ցից: Արտաքին լուրեր: — «Մշակի» հեռագրեր:
— Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բա-
նասիրական: Մեր անշարժութիւնը և մեր
անելիքը:

ՄԻԱԿ ՄԻՋՈՑ

Չէ՛ կարելի ուրախութեամբ չը
բարեկէ վերջն ժամանակները
տէրութեան արած երկու խելացի
կարգադրութիւնները:

Տէրութիւնը դիմում է հասա-
րակական կարծիքին, ուստի ազ-
գի բոլոր դասակարգերին, օգ-
նով ինչ խնդրելով ազգից, որ-
պէս զի հասարակութեան գոր-
ծակցութեամբ կարողանայ արմա-
տից հանել վերջն ժամանակները
Ուստի արմատաւոր տարածվող հա-
տարակական զանազան վարդա-
պետութիւնը, դիմում է ուսանող
երիտասարդութեանը հրաւիրելով
նրան խղճմտաբար վերաբերվել
դէպի գիտութիւնը, իսկ մեր
երէկվայ համարում տպված հե-
ռագրից իմանում ենք, որ տե-
րութիւնը աչքի առջև ունեւորվ

անցեալ տարի կիւլի համալսա-
րանից արտոլված ուսանողների
երիտասարդ հասակը և նրանց
անփորձութիւնը, կրկին թոյլ է
տալիս նրանց մտնել թէ կիւլի
և թէ ուստի այլ համալսարան-
ները:

Յաւելով պէտք է ասենք, որ
եթէ Ուստիստանում վերջն ժա-
մանակները կարողացան այդքան
աշտոլութեամբ տարածվել և խոր
արմատներ գցել զանազան սուտ
և զանազան հասարակական վար-
դապետութիւնները, գործ մէջ
գլխաւորապէս մեղաւոր են մեր
համալսարանները, կամ աւելի լա-
ւ է ասել, համալսարանական գի-
տութիւնը:

Պարզեք մեր միտքը: Արե-
ստեն, քառասուն տարի սրանից
առաջ կային ուստի համալսա-
րաններում ճշմարիտ գիտութեան
մարդիկ, գիտութեանը ամբողջ
սրտից նուիրված անձինք, բայց
այժմ ո՛ր են Գրանսիւսի, Կուդ-
րիավցիի և ուրիշների պէս պրո-
ֆէսորներ, որոնք գիտէին գրա-
ւել ուսանողութիւնը դէպի ճշմա-
րիտ գիտութիւնը, ծնեցնել երի-
տասարդ գլխներում ոգևորութիւն

և սէր դէպի բարձր, գիտնական
ճիշդ գաղափարները, դէպի գի-
տութեան ուսումնասիրութիւնը:
Մեր այժմեան պրոֆէսորները,
ինչպէս և գանգատվում է այժմ
նոյն իսկ ուստի լրագրութիւնը,
զառել են գործնական մարդիկ,
որոնք միայն ձեռի համար կար-
գում են գիտնական դասերը, իսկ
նրանց բոլոր ուշքը և միտքը դար-
ձած է դէպի զանազան ֆինան-
սական օպերացիաները, դէպի
բանկային գործունէութիւնը: Նը-
րանք մտածում են ոչ թէ գիտու-
թիւնը աւանդելու և երիտասար-
դութեան կրթութեան վրա, բայց
ամեն տեսակ միջոցներով հարս-
տանալու, շահաւէտ օպերացիա-
ներ ձեռք բերելու մասին: Եւ
մեր համալսարանական գիտու-
թիւնը:

Միւս կողմից ուսումը մեր
կլասիկային գիմնազիաներում և
բարձրագոյն դպրոցների մէջ մուտ-
քը այնքան դժուարացել է, որ
երիտասարդութեան մեծ բազմու-
թիւնը միջնակարգ ուսումը չա-
ւարտած, կամ բարձրագոյն դպ-
րոցները չը մտած, կամ վերջապէս
ամեն տարի ուսման ընթացքը

կիսատ թողնելով, դպրոցներից
դուրս եկած, անգործ թափա-
ռում են հասարակական ոչ մի
պարագմունք չը գտնելով:
Իսկ սուտ և ֆինանսական վար-
դապետութիւնները այս տեսակ-
ների մէջ են գտնում մեծ մասամբ
չերմ կուսակիցներ...

Այդ պատճառով չէ կարելի
չուրախանալ, երբ երիտասարդու-
թիւնը հրաւիրում են ծանր կեր-
պով և խղճմտաբար վերաբերվել
դէպի գիտութիւնը, արտոլված-
ներին կրկին կրնդունեն գի-
տութեան տաճարի մէջ, ոչոքին
արգելք չեն դնի մտնել ամեն տե-
սակ ուսումնասիրանքներ, երիտա-
սարդութեան առջև ամեն ուսում-
նարանների դռները կը բաց անեն,
կը հեշտացնեն թէ միջնակարգ և
թէ բարձրագոյն դպրոցների ուս-
ման ընթացքը:

Սուտ և ֆինանսական վարդա-
պետութիւնը կարող է յաղթել
միմիայն ճշմարիտ ուսումը և ճշ-
մարիտ գիտութիւնը: Միայն լոյսը
կարող է յաղթել խաւարը:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԱՆՇԱՐՋԱԿԱՆ ԵՒ ՄԵՐ ԱՆՇԵՆԻՐԸ

Որչափ խնդիրներ, հարցեր տարակուսանքներ
են յարուցանում մեր լրագրութեան մէջ և
նրանցից որչափ քիչերը կատարեալ զարգաց-
ման հասցնելու: Որքանութեան կողմից նրանք
չափ և չափ են. բայց համարեա բոլորն էլ կի-
սակողոր, թերի, միւսներից անկախ, անկապ,
անմիջապէս: Նախ քան տեսնել մի որ և է առա-
ջը լրագրութեան կեանքի մէջ գործադրութիւնը,
պէտք է ծանօթանալ նոյն իսկ առաջարկու-
թեան հետ կատարելապէս. պէտք է քննել նրա
էութիւնը, նրա նշանակութիւնը, սպասելի օգուտ-
ները, բոլոր նպաստող ու խանգարող պայման-
ները և այլն: Մինչդեռ հազիւ թէ կարելի լինի
մեզնեցոյց լինել մի որ և է խնդրի վրա, որ
կարող լինէր բոլորովին հետազօտված և ուսում-
նասիրած համարվել: Իւրաքանչիւր նոր խնդրի
տեսիլ է տալիս նախընթացիկին առանց նշա-
նակելու իր տեղը նրանց մէջ, առանց որոշելու
իր ազդեցութեան սահմանը, դատապարտված
լինելով նոյնպէս անողորմաբար յետ մղուելու մի
նոր անկող ընկերակցից:

Լրագրում գրողները ոչինչ կապ չունեն մի-
մեանց հետ, չեն հասկանում իրարու ցանկու-
թիւնները, չեն ճանաչում հակառակ համոզմունք-
ների հասարակական գինը: Լրագրին մօտ թէ
հեռու մի մարդ գրված հասարակական մաս-
նաւոր կամ ընդհանուր մի պակասութիւնից գը-
րում է յօդուածներ, որտեղ կամ քննում է ամ-

բողջապէս մի խնդիր, կամ առաջարկում է մի-
ջոց, որ նրա կարծիքով պէտք է փրկարար ազ-
դեցութիւն ունենայ հասարակութեան վրա, յօ-
դուածագիրը սպասում է՝ թէ նրա գրվածքը ոչ ի-
նչով կը կարգացի, դատողութիւնների ու վէճերի
առարկայ կը լինի, կրնայ անաչառ ու անողորմ
կրիտիկայի տակ և թէ ևս գրեց զգուշացնելու ջան-
քով կամ բայց գոնէ ճշմարտութեան արդէն
հաստատ յատկանիշներով որոշված կը դառնայ
իրան և որ գլխաւորն է պարզած ու զտած կը
լինի հասարակական մի յայտնի խնդիր. բայց
անխնայ անցնում է ժամանակը, լուրջ լուրջի-
նեմ, և յոյսը չէ արդարանում: Իւրաքանչիւր
կենսական երևոյթի վրա մենք արդէն սովոր ենք
այդպէս անփոյթ և անզգուշ նայել. գրեց երբեմն
խօսում ենք, յայտնում ենք նրա գոյութիւնը աշ-
խարհի երեսին, բայց երբեք չենք մտածում,
չենք ուսումնասիրում, խորը չենք մտնում և խորը
քննում:

Քանի անգամ, օրինակ, առաջարկված է մե-
զանում տնտեսական մի քանի մեծ և ծանր խն-
դիրներ մանրամասն մշակել. սկսելով նիւթեր
ժողովելուց, լրագրին հարուստ տեղեկութիւններ
հաղորդելուց, մինչև ընդհանուր ու մանրամասն
դատողութիւններ անելը, Քանի անգամ ծրա-
գիրներ հրատարակվեցան թէ այդպիսի և թէ
ուրիշ խնդիրների վերաբերմամբ. գոնէ մէկը
յանձն առաւ մի որ և է նահանգի, քաղաքի կամ
գիւղի վրա փորձ անել, հաղորդելով չարունակ
մի քանի տարիներ հարկաւոր տեղեկութիւններ,
կամ գոնէ աշխատել ժողովելու նրանց ապագայ
մի մշակված յօդուածի կամ հիմնաւոր հայեացքի
համար: Այն անձինքը, որոնք համար գրվում էին
ծրագիրները, շատ շատ ընդունում էին արտա-
քին կողմը այդպիսի նամակագրութեան առանց

հասկանալու իրանցից պահանջածի մեծ կարեւո-
րութիւնը և երևի չը հաւատարմով մի առանձին
օգուտ, որի համար լրագիրը այնքան երկայն ու
բարակ խօսում էր: Մի քանի տարի տնտեսա-
կան խնդիրների վրա խօսելուց ու կցկտոր տե-
ղեկութիւններ ստանալուց յետոյ մենք այժմ
տեսնում ենք, որ դարձեալ համարեա թէ նոյն
ձեռով պէտք է նորից դարձեցնել նրանց և նորից
առաջարկել, որ ամենայն մարդ կարողութեան
չափ սկսի նիւթ ժողովել և դատողութիւններ
անել. մանաւանդ, որ մեր ընթերցող հասա-
րակութիւնը և մինչև անգամ գրող փոքրամաս-
նութիւնը սովորութիւն չունեն նայել լրագրի
հին համարները, կարգաւ մի քանի տարի առաջ
գրուած յօդուածները, հետաքրքրվել այն մտա-
ւոր կեանքով, որ թէ և իրանից փոքր ինչ հեռու
է, բայց այժմեան կեանքի հետ փոքր ի շատե-
կապ ունի: Եւ որի ուսումնասիրութիւնը կը հար-
թի նրա զարգացման ճանապարհի ոչ պակաս
մասը:

Գրեց ընթերցողը յիշէ, որ մեր լրագրութեան
մէջ առաջարկվում էր մի ժամանակ մեր դրա-
ցիների կեանքի ուսումնասիրութիւնը: Գլխաւոր
ենթադրութիւնը սա էր. մենք մեր տնտեսական
և մտաւոր ու բարոյական կեանքում մինչև այժմ
կամայակամայ կից ենք եղել մեր հարևանների
հետ. նրանց ազդեցութիւնը մեր թէ լեզուի ու
հայեացքների և թէ բնութեան ու վարքի վրա
մեծ է եղել. այժմ ևս ապրում ենք և գոնէ մօտիկ
ապագայում նրանց հետ պէտք է ապրենք, ու-
րեմն շատ կարևոր է մի կողմից քննել հասկա-
նալ ու որոշել նրանցից ընդունածի որքանու-
թիւնը ու որակութիւնը և միւս կողմից թօթա-
փելով նրանց ճշումը ու հեռացնելով ազդեցու-
թեան ֆինանսական կողմը մեզնից աչքաւոր ազ-

դել նոյն իսկ նրանց կեանքի վրա, որի ներգոր-
ծութիւնը չարունակվելու է քանի ապրում ենք
նրանց հետ: Լրագրի խօսքերը այն ժամանակ
լավեցան և մի երկուսը կատարեցին ցանկա-
ցածը մի երկու յօդուածով. բայց մեծ մասը
դարձեալ ընդունեց արտաքին ձեռ, տալով փո-
խանակ դիտողութիւնների և հասարակական
երևոյթիների զուգակողմեան բոլորովին աւե-
րադ նկարագրութիւններ, որոնց գոյութիւնը
խնդրի վերաբերմամբ լրագրական էջերում բոլոր-
ովին անտեղի էր և անօգտակար. և այն, որ
գլխաւորն էր, այն որ պահանջվում էր թղթեղե-
ցից, այն-իսկ չը տրվեցաւ և խնդրը անմշակ
դարձեալ յաւիտենականութեան դիրքը մտաւ:
Ինչպէս որ նախնիաց խնդրում, նոյնպէս և սրա-
նում հազիւ թէ մէկը գոնէ իր սեփական հա-
կացքները պարզելու կամ հանգիստ բաւակա-
նութիւն տալու համար այժմ ժողովում լինի
նիւթեր կամ այստեղ այնտեղ պտտելով դիտո-
ղութիւններ անում:

Ուսումնասիրական հարցերը մեր լրագրական
յօդուածների առաւոյն նիւթ են եղել միշտ. մարդ
չէ մնացել, որ այդ վերաբերմամբ մի երկու խօսք
առած չը լինի, բայց սկսում են ժողովել, շարել,
կարգադրել բոլոր եղանակները, գումարում են գու-
մարում և հետևանքը ստանում են ոչինչ: Արդէն
ամենեւեմ ճանաչեցինք նաև ուսումնասիրական
հարցի վրա խօսելուց. բայց գործը մի քայլ էլ
առաւ չէ գնացած: Շատ յօդուածներ գրվել են
կարծես գրելու համար: Ուսումնասիրական
հարցերը չեն մեղաւոր, որ ձեռ ճանաչեցինք նա,
այլ այն անհամ և անհիւթ յօդուածները, որ
գրվել են նրանց աւելով: Ո՛ր է ճշմարիտ կըր-
թութիւնը. երբ են նրան ծանր ընթանալու թեման

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

29 օգոստոսի

Կարծում էի թէ՛ զրելը մոռացել եմ. բայց ուրախ եմ որ դեռ ես չեմ մոռացել. դուք ինքնաբերաբար արդէն վկայում էք որ «ոճա լաւ է» և խորհուրդ էք տալիս շարունակել զրելը. չնորհալով եմ ձեր լաւ կարծիքից: Հէնց կարծես ես էլ եմ համոզուում որ լաւ եմ գրում և համոզվելուս պատճառն էլ այն է, որ ուղարկած յօդուածներս ամբողջապէս չեն հրատարակուում: Միշտ փորձել եմ, երբ որ դուռ ճամարտութիւն եմ գրում չէ՛ տպուում. ուրեմն այն տպվածն էլ կարող էր միայն ոճի կողմից լաւ լինել, իսկ բովանդակութեան կողմից, քան լիցի. ապա թէ՛ ոչ չէր տպուի: Այսուհետեւ կաշխատեմ ուրեմն զրել ձեռք ախպիսի յօդուածներ, որոնք ոճի կողմից լաւ լինեն, իսկ մտքի ճամարտութեան կողմից այնպէս, որ ոչ ոքին չը վիրաւորեն, այսինքն մերկ ճամարտութիւններ չը լինեն, այլ այնպէս, ինչպէս որ սովորութիւն է զրել: Օրինակ հարկաւոր չէ ուղղակի ասել թէ՛, մեր պօլիցիան որ ցոյց է տալիս թէ՛ 21,000 բուբուն պառնիկ է մնացել քաղաքին վրա, այդ ճշմարիտ չէ, որովհետեւ ու՛մ վրա որ մասնագիտաց չը լինում թէ՛. «այդ պարոնը դեռ ես իր տան, խանութի կամ այգու հարկը ներս չէ բերել», դուրս է դալիս որ այն ողորմելի պարոնը իր հարկը փոխանակ տարին մի անգամ ներս տանելու, տարել է երկու, երեք անգամ և ձեռքով ունի ստացատրումները, որոնք տարաբաղաբար մեծված չեն անտեղ, որ մտնելու էին, եթէ ստացատրումս տուողները աղնուաբար չը մոռանային:

Չէ՛ կարելի նոյնպէս պարզ ասել որ՝ այն էլ ճամարտ չէ որ պոլիցիան ցոյց է տալիս իբր թէ՛ հարկաւոր ու՛մ հանգուցեալ Աւր վրա ժողոված հարկից մնացել է 7,000 բուբուն, վասն զի այսպիսի զրպարտութիւնները միայն հանգուցեալները վրա կարելի է դնել: Չէ՛ կարելի պարզ ասել որ այն 60,000-ից աւելի բուբուն, որ սրանից քանի մի տարի առաջ քաղաքը ունէր և որի ինքնութիւնը չէ երևում այժմ, բոլորովին քաղաքի բարեկարգութեան վրա չէ ծախսված, ինչպէս մի քանի անգամ տուումս արգէտները: Նոյնպէս չէ կարելի պարզ ասել, որ եթէ յունվարից մինչև այսօր մեր քաղաքագլուխը չէ կարողանում իրաւասուններ ընտրել, վարչութեան անդամներ ընտրել և իր վրա դրված գործը սկսել, նրա պատճառը քաղաքի կամ քաղաքացիների մէջ չէ, այլ պարզ ի պար-

առարկայ չինել: Երբ ես աշխատել մանկավարժութիւնը հանելու նրան կաշխատող արդելքներից: Ո՛չ գործնականութեան մէջ է առաջ տարված կրթութիւնը, ոչ նախապէս մեր հասարակութեան հասկացողութիւնների մէջ: Մեր կրթութիւնը և նրա հիմքը թէ՛ որչափ խախտու է, այդ շատերին դեռ հասկանալի չէ. բայց նա պակասութիւններով ու սխալներով լիքն է: Մեր ուսումնարանական քննադատութիւնը դուրս չէ բերել մինչև այժմ ուսումնարանական օգուտները ծանրախոհ ներկայացուցիչ, նրա բացասական ու դրական կողմերի անաչառ ու հիմնաւոր հետազոտող և նրա ապագայ առաջադիմութեան պայմանների աջող ձևակերպող: Ուսումնարանական խնդիրը թէ՛ և ունի իր հերթաները և չէ կամենում անհետանալ լրագրի ամենօրեայ շջերից, բայց ոչ իր հերթներին է բաւականացնում և ոչ լրագիր ընթերցողներին: Եւ դարձեալ խնդիր պէտք է նորից դնել, հասկացնել իւրաքանչիւրին, որ նա զատարկ հարցաքննական փայլերի նկարագրութիւնները և անձնական աւելորդ զգացմունքները թողնի, որ նա համբերութիւն ամբարի, մի փամ և մի բուպէ չը գործելու իր գրել խնդրի վրա, այլ ամիսներով ու տարիներով զիտելու ու հայեացք կազմելու, որ աչքի առնի ընդհանուր հասարակական կեանքի, բնութանկան դատարարականութեան, ուսուցչի ընտանաւորութեան, մանուկների բարոյական ու մտաւոր պատրաստութեան փոխադարձ յարաբերութիւնները և ազդեցութիւնը:

Օրինակների թիւը կարելի կը լինէր աւելի ևս մեծացնել, եթէ առաջ բերածները բաւական չը համարէիք մեր միտքը պարզելու համար: Կարելի կը լինէր թուել մի առ մի և շատ ուրիշ խնդիրներ, որոնք քաղաքոված են եղել մի փամանակ և անորոշ և անվճիռ մնացել մինչև

զոյ նրանումն է որ՝ մի տեսակ մարդիկ կան, որոնք աւելորդ են համարում առ այժմ քաղաքական վարչութիւն ունենալը. որովհետեւ ասում են. «վարչութիւնն սկսելու համար հարկաւոր է առնեն 20,000 բուբուն ունենալ, այն ինչ քաղաքը պարտք էլ ունի...»

Հարկաւոր եմ համարում ասել որ նախագաւառը բարեհաճեց այս մասին ժողովել տալ քաղաքին հայ և թուրք ներկայացուցիչներին և հարցրեց թէ, ինչ կասեն արդեօք այդ ներկայացուցիչները: Բոլոր հայերը և թուրքերի էլ կէսը, ուրեմն ձայնից բազմութիւնը վճռեց որ հարկաւոր չէ՛ յետաձգել քաղաքային վարչութիւնը, այլ պէտք է բանալ և բանալու համար պատրաստ են հարկաւոր եղած 20,000 բուբուն իրանց միջից տալ, մի քանի տարի ժամանակով, այսինքն, մինչև քաղաքային սնդուկը կարող լինի վճարել և թէ, համոզված են իրանք որ միայն քաղաքագլխի կառավարութիւնը կարող է քաղաքի սնդուկը պարտքից ազատել և հարստացնել: Քաղաքացիների այս կարծիքը և յայտարարութիւնը թէ՛ որքան ուրախացրեց պղտոր ջուր սիրողներուն, այդ չը գիտեմ, բայց զիտեմ որ պ. նախագաւառը սիրով է ընդունել քաղաքացիների յայտարարութիւնը: Այո, բոլոր վերոյիշածներս ճամարտութիւն են, բայց ինչ հարկաւոր է որ այսպէս մերկացնեմ ճամարտութիւնը: Այս մի և նոյն ճամարտութիւնները կարելի էր աւելի քաղաքագլխի ոճով պատմել. «որինակ. կարող էի հարցն այսպէս դնել. «ամենքին յայտնի է որ մեր հոգեւոր կառավարութիւնների և կոնսիստորիաների անդամները ձրի են ծառայում այդ հիմնարկութիւններում, բայց ինչ է պատճառը որ այդ պաշտօնը ստանալու համար չաքարի գլխերի էլ են ուղարկում որոնց հարկն է ինչ ներդրութիւն, դուք չէք սիրում հոգեւորականների վրա բան խօսելը, ուրեմն ես էլ չեմ խօսում նրանց վրա»: Բայց սրան ինչ կասէք որ՝ երկու ծառայողներ, որոնք մի և նոյն հիմնարկութեան մէջ են ծառայում, խօսելի համար ասենք թէ՛ հէնց մեր պոլիցիայում, երկուսն էլ տարեկան 600 բուբուն կամ մի բան աւել պակաս են ստանում և բացի այդ ուճակից ոչ մի ուրիշ եկամուտ էլ չունեն. երկուսն էլ ունեն ընտանիք, երեխայք և աղջն. բայց այս երկու ծառայողներից նա, որ ել ու մտից մատնան է պահում, ապրում է 600 բուբուն ստացողների պէս, իսկ նա՛ որ հասարակ թղթերի հետ գործ ունի, այնպէս է ապրում որ կասեմ թէ՛ պոլիցիայի աստիճանաւոր չը լինի, այլ հայոց ուսումնարանի մի վարժապետ: Ի հարկէ որ այսպիսի մի համեստ կերպով եթէ հարցնէի ձեզ, դուք էլ խելոյն կը հասկանայիք թէ՛ մեր քաղաքական սնդուկն ինչու է դատարկ, ընթերցող երեսնային էլ զլիս կընկնէր թէ՛ քաղաքի

այժմ իսկն ասած՝ պահանջել չէ կարելի, որ իւրաքանչիւր նոր յարուցիչ խնդրի մի քանի շաքարով կամ ամուսն վճովի լիապէս և մեր ասածն էլ այդ չէ: Կան խնդիրներ, որոնք երբեք վերջնական ձևով վճովել չեն կարողանում, որոնք ենթարկված են հասարակական պահանջների դարձացման ու փոփոխութիւնների ազդեցութեան տակ: Այդպիսի խնդիրներ քիչ չեն. գուցէ դա հասարակական խնդիրների մեծ մասը միջակն է—աստիճանաբար դարձացում և լայնացող յառաջդիմութիւն: Իւրաքանչիւր վճիռ ունի միայն իր ժամանակակից գինը և համապատասխանում է ընդհանուր հասկացողութիւնների յայտնի աստիճանին. նա համարվում է վճիռ, իբրև միակ ելք տանջող տարակուսանքներից, իբրև միակ կարելիութիւն ծառայեցնել հանգամանքները շահաւէտ կերպով մեր նպատակին: Եթէ անկարելի է խնդիրը վերջնական կերպով վճել, աշխատենք այդ վճելու ամենամօտ քայլերը գտնել դնելու, սկսենք հիմնաքարը նշանակելու, նիւթեր պատրաստելու և որմերը ու սիւնները բարձրացնելու: Գտնէ այն, ինչ որ անում ենք, զուգուրութեամբ անենք, հաշիւ տանք իւրաքանչիւր արած քայլում և առանց կատակի նայենք մեր թէ՛ յօդուածների և թէ՛ գործունէութեան վրա:

Միթէ՛ իրաւի նոյնպէս անպտուղ պէտք է մնան և մոռացվեն և այն մի քանի մեծ խնդիրները որ այժմ դեռ հետաքրքրում են ըստ երևոյթին ամենուն: Միթէ՛ այն սխալը, որ արված էր արեւելեան խնդրի վերաբերութեամբ օրինակ միւս անգամ ևս պէտք է կրկնվի, կամ միթէ՛ այդ խնդիրը բոլորովին չը պէտք է պարզվի ամենի առաջ իր թէ՛ ներքին և թէ՛ արտաքին կողմերով—Գուցէ թէ՛ այսուհետեւ պէտք է որ աւելի զգուշ լինենք ի հարկէ կարելի է. բայց

21,000 ապառիկ ասելն ինչ կը նշանակէ... Բայց արեւմտեան որ ես այսպէս համեստ խօսելու սովորութիւնը, ստախոսութեան պէս մի բան եմ համարում և հէնց որ ուզում են սկսել սպիտակ ասել, ոչ ձանձու դողում է, զրիչս էլ առաջ չէ գնում: Օրինակ, ուզում էի մեր քաղաքական ընթերցարանի վրա մի երկու խօսք ասել և խօսելիս համեստութիւնը ի նկատի պահել, չէի ուզում ասել որ նրա կառավարիչները (մէկը հայ, միւսը հրէայ) կամենալով ընթերցողների թիւը շատացնել, որով և արդիւնքը բազմացնել, մի քանի ամիս սրանից առաջ, իր առաջվայ տեղից հանելով, մի գարեջրատան կից բնակարանում են գետեղել, որոնց միջնադրմը վերի կողմից բոլորովին բաց լինելով, ինչ որ խօսում են, գարեջրատան մէջ բոլորը լսվում է գրատան մէջ և որովհետեւ գարեջրատան մէջ ժողովված ամբոխը միշտ խօսում է այնպիսի աղաղակներով և բառերով, որ միայն փչացած ճաշակի տէր մարդիկ կարող էին լսել և գուարճանալ, այդ պատճառով, փոքր ինչ պատկառանք ունեցող մարդիկ բոլորովին հեռացան գրատուն յաճախելուց. ուրեմն հայի և հրէայի նախատեսութիւնը չը հասաւ իր նպատակին, արդիւնքն աւելացնելու փոխարէն, պակսեցրին: Բայց միայն արդիւնքը չը պակսեց, լաւ լաւ գրքերն էլ անհետացան, որովհետեւ գրադարանագետը լինելով անվարձ, շատ շատ մի երկու շաքար թէ՛ ծառայում և սրտի ուզած գրքերը իր հետ է տանում: Մէկը ելնելիս, ունի ուզում է, բաւանիքը նրան է տալիս: Ընթերցողների բոլոր բաւականութիւնը նորանում է, որ նոր նոր գրադարանագետներ է տեսնում և գարեջրատանից լաւ լաւ բառեր լսում. կից եց մեր գրադարանի կառավարիչները: Գրադարանի մասին կարելի է ասել. «անտէրութիւն անտէրութեան ամենայն ինչ անտէրութիւն է»: Մեր պարոն քաղաքագլուխը խօստանում է բարեկարգել հասարակաց ընթերցարանը, երբոր քաղաքային խորհրդարանը բացվի. այս խօստումը մեզ միեթարում է, եթէ միայն իրագործվի:

Հին-Բարեկամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐՈՐ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Իմանալով, որ ուսումնաբար դրժեքը չուտով պէտք է հեռանան Հին-Բարեկամից, այդ քաղաքի հայ բնակիչները ջիւր ու ցան եղան: Յիսուսն և հինգ տուն գնացել են Իգդիր, շատերը Ղարս են ուղևորվել»: Այս լուրը հաղորդել է մի պատահական թղթակից:

Թէ՛ ներկան որչափ է արդարացում ապագայի համար գրած յոյժը—մեծ կասկածի տակ է: Վերառէք լրագիր ընթերցողներից շատերին, հարցրէք. ինչ է այդ արեւելեան խնդիրը, ինչպէս են նրանք նրան հասկանում և ինչու են համարում այս ու այն ազգութեան փրկութիւնը և գրեցէք ու համեմատեցէք նրանց ասածները, տեսէք թէ՛ որչափ անորոշ, ծուռ ու սխալ խաւար և յետագէմ մտքեր կը շարեն ձեր առաջ և որչափ տղայական պարզամտութիւն կը ցոյց տան: Միթէ՛ դուք կարծում էք թէ՛ այն յօդուածները որ լրագրում տպվում էին, այդ բոլորը էլ ուշի ուշով կարդացվել են: Միթէ՛ այն բոլոր փաստերի, տեղեկութիւնների ու դատողութիւնների վրա նրանք երկայն կանգ են առել և երկայն մտածել:

Եւ շատ ուրիշ երևոյթներ անցնում են այդպէս ամեն օր: Երևում են վէպեր, տպվում են ամսագրեր, կազմվում են ընկերութիւններ. դրանց վերաբերմամբ գրաւոր դատողութիւններ չեն երևում. իսկ բերանացի կրիտիկոսներից՝ մի քանիսը հիացած են, միւսները պախարակում են. իսկ ուրիշներն էլ այս ու այն կողմ տատանվող ճոճանակի դեր են կատարում: Եւ ինչիցն է այդ թշուառ դրութիւնը: Նրանից որ ոչ մէկը կրիտիկական չափ չունի իր հայեացքների համար, որ հիմնական հասկացողութիւններ չը կան նրա մէջ սերմանված ու արմատացած, որ կարողութիւն չէ տրված բրգանելու միմեանց ետեկից բռնաող երևոյթները և փաստերը, որովհետեւ մեծ տգիտութիւն է տիրում ամեն տեղ և այն էլ քաղաքակրթական վարագուրով սքողված տգիտութիւն: Կանքը պահանջում է շարժում և իւրաքանչիւր ուշ արած քայլը խլում է ձեռքից

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ. «Չը նայելով որ վաղուց անձրիկ երես չենք տեսել, մեր քաղաքում բաւական հով է: Ամառանցից արդէն վերադառնում են: Ասում են, որ չըջակայ գիւղերում, մանաւանդ Արափարում սաստիկ տարածված են ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւնները, որոնք բաւական զոհեր են տանում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՒՐ-ԱՍԻԱ

Մանօթացնելով Փոքր-Ասիայի կրօնների հետ, Մակ-Կոն, «Fraser's Magazine» անունով իր նոր գրքի մէջ թուում է Ասիական Թիւրքիայի ազգայնութիւնները «The Races of Asiatic Turkey», որոնք թէպէտ և այնքան բազմաթիւ չեն, որպէս կրօնները, ժողովանեան Կայսերութեան արեւելեան գաւառների մէջ ազգայնութեան ամբողջութեան մէջ միաւորելու խնդիրը նշանաւոր կերպով բարդում են: Բոլոր զանազանակերպ ցեղերի թիւը, որը համարեա տաս և երկուսի է հասնում հաշվում է 13-ից մինչև 18 միլիոն: Մակ-Կոն ենթադրում է, որ 16,500,000 թիւը ամենից մօտ է ճշմարտութեան: Պաշտօնական և այլ տեղեկութիւնների հետ բաղդատելով, այս գումարը իրան կազմող տարրերի վրա բաժանվում է մօտաւորապէս հետեւեալ կերպով. 10,000,000 թիւերը, 2,000,000 հայեր, 1,250,000 քուրդեր, 1,000,000 յոյներ, 1,000,000 սիրիացիք, 700,000 արաբներ, 350,000 չերիկներ, 90,000 թիւրքմէներ, 60,000 հրէաներ, 50,000 թաթարներ, ցիգաններ և ուրիշները, բոլորը 16,500,000:

Թիւերը, այդպիսով, կազմելով բոլոր ազգաբնակչութեան երկու երրորդ մասը, գլխաւորապէս տիրապետում են Փոքր-Ասիայում: Իսկապէս նրանց պէտք է «օսմանլիներ» կամ «օտոմաններ» անուանել, կիսաբարբարոս թուրքմէներից և ամենահին ժամանակներից Արեւմտեան Ասիայում ցրված միացեղ ազգայնութիւնների ուրիշ ճիւղերից զանազանելու համար: Ասիական ազգաբնակչութեան այս գլխաւոր տարրի կարգադրելը, ստատիստիկական թւեր չունենալու պատճառով կարող

ապագայի մեծ բաժինը: Ժամանակն է թողնել անտեղի ինքնասիրական հպարտութիւնը և սուտ ամօթը, խոստովանելու որ ոչինչ չենք իմանում և սկսենք եռանդով ու սիրով միմեանց ուսուցանել, միմեանց իմացածներից օգտվել: Նախքան մեր լրագիրները, ամապղծները հին համարները, ծանօթանալով անհրաժեշտ խնդիրների հետ. գրենք, խօսենք արդէն բոլորովին մի կողմ թողած բոլոր աւելորդ հայիւնները և ըստ կարողութեան գործենք մեր աւօրեայ կեանքում բազմացնելով ամեն տեղ լուսաւորող ու կրթող միջոցները:

Բացիմէ՛ղա սկսենք կապ գցել բոլոր գործողների մէջ և այդ կապը ամրացնել աշխատենք օրից օր աւելի ու աւելի լրագրութեամբ, նամակներով, ժողովներով և այլն: «Յոյսներս» չը դնենք այս և այն դատակարգի վրա միայն, ինչպէս առհասարակ սովորութիւն է մեզանում: Օրինակ, ինչո՞ւ մի առանձին սէր ունեն մեզանում ամեն տեղ զանազան պահանջներ անել միայն հոգեւորականներից, և հարցնում եմ ինչո՞ւ մի և նոյնը և աւելի չէ կարելի անել օրինակ և ուսուցիչներից, որ աւելի կրթված մարդիկ են և որոնք այնու ամենայնիւ այսքան տարի է՝ ոչ մի աչքի ընկող նիւթ չը ժողովեցին հասարակական որ և է գիտութեան համար, չը նայելով որ ցրված էին զանազան տեղերում, քաղաքներում ու գիւղերում և կարողութիւն ունէին հազարաւոր օգտաւէտ գիտողութիւններ անել: Ինչո՞ւ նոյնքան ես չէ կարելի պահանջել և զանազան իրաւագէտներից, բժիշկներից, գիւղատնտեսներից, վաճառականներից և այլն:

Գործը ընդհանուր է, գործենք ընդհանուր ամենքս:

Մօսկվա.

Քալանթար

է մօտաւորապէս նշանակած լինելը։ Մօտ երկու երրորդ մասը բնակեցրած է Փոքր-Ասիայում, 1,500,000 Հայաստանում և Քուրդիստանում են գտնվում, 750,000 Մեծասիայում, 500,000 Սիրիայում և Պալեստինայում, իսկ մնացածները Գէջստանում, Մակ-Կոն Հաղորդելով վերջինից ցեղերի վերաբերութեամբ պատմական կարծ տեղեկութիւններ և նրանց յատկանիշ գծերը, աւելացնում է, որ թիւրքերը առաւելագոյն քաղաքներում են ապրում և միայն այն նահանգներում են երկրագործութեամբ պարապում որտեղ մեծամասնութիւն են կազմում։ Ֆիզիկական կողմից նրանք ասիական ժողովուրդների մէջ ամենագեղեցիկներ են։ Նրանք համարեա բոլորը միջին հասակից բարձր են, պինդ և առողջ կազմուածքով, որ բնականաբար պէտք է վերաբերել ժողովուրդների և բարոյականութեան որով գերազանցում էր այս ցեղը դարերի ընթացքում։ Մակ-Կոն չէ համարում այստեղ լազերին, որոնցից իր անունը առաջապիգծին և Բաթումի մէջ գտնված վայրերն է գաւառը և որոնց պահանջների վրա, վերջին ժամանակներում, վառարկեցաւ բրիտանական այնքան համակրութիւնը։ Նրանք սաստիկ կերպով զանազանվում են թիւրքերից, բայց անունով ամենափանաթիկոս մահմետականներ լինելով, պէտք է նրանց համարել իշխող ազգաբնակչութեան մասի հետ։ Մակ-Կոն բոլորովին համաձայն է անգլիական ուրիշ ճանապարհորդների յայտած պատարան կող արձագանքների հետ լազերի բնութեան մասին, և ասում է, որ եթէ լազի և քուրդի մէջ ընտրութիւն անել, պէտք է քուրդին գերադասել։

Թիւրքերից յետոյ, թուով և նշանակութեամբ հետեւում են հայերը։ Հրէաների նշանակ, նրանք մէկ այսպիսի ցեղ են ներկայացնում, որոնք ցրված են ամբողջ աշխարհի վրա, խառնվում են և երբեք չեն ձուլվում ուրիշ ժողովուրդների հետ։ Նրանք հաստատ են իրանց ժառանգական կրօնի մէջ և ծածուկ յուսադրվում են ազգային ինքնուրոյնութիւն ստանալ, որի մէջ, ի հարկէ, նրանք, թիւրքահայատակ բոլոր ուրիշ ցեղերից աւելի ընդունակ են։ Հայերի մէջ շնորհիւ իրանց հարստութեան և փառանքի հետ ունեցած մօտիկ յարաբերութեան, ամենամեծ ազդեցութիւն ունեցողները բանկիրներ են։ Նրանք պատասխանատու են այն բազմաթիւ կառավարչական հարստահարութիւնների համար, որոնք կատարվում են ոչ միայն իրանց համայնքի այլ և ազգաբնակչութեան բոլոր դասաւարդների հետ։ Բոլոր հայերի թիւը մօտաւորապէս 4,000,000 են հաշվում, ներանցից մինչև երկու միլիոն բնակվում են ասիական Թիւրքիայում, 450,000 Կ. Պոլսում և Բուսնիայում, 1,000,000 Ռուսաստանում, 400,000 Պարսկաստանում, 40,000 Հնդկաստանում և ասիական Արևելքում, 25,000 Աւստրիայում, Իտալիայում և Հունգարիայում, իսկ մնացածները ցրված են ուրիշ երկրներում։ Յեղի մեծամասնութիւնը ասիական այս գաւառներում շարունակում է իր նախնիների հոգի վրա ապրել, Արարատի սըրբազան շրջաններում, իսկ երեք ընդարձակ վեյսլէաներում՝ Էրզրումում, Քուրդստանում և Դիարբեքլիում հայերը թուով գերազանց են թուրքմէններից։ Հին ժամանակներում նրանք յայտնի էին իրանց քաղաքներ և զինուորական ոգով, իսկ նոր ժամանակներում նրանք յայտնի են իրանց խաղաղ բնաւորութեամբ և հնազանդվում են այն երկրի կառավարութեանը, որ երկրի մէջ որ բնակվում են։ Այնու ամենայնիւ ցեղական լաւ յատկութիւնները աւելի գիւղական դասակարգերին են պատկանում, քան թէ քաղաքների մէջ բնակվող ժողովուրդին։

Քուրդերը վայրենի և զինուորական ցեղ են, նրանք գրականութիւն չունեն, և այս ցեղի

պատմութիւնը կատարելապէս չէ կարելի պարզել։ Նրանց թիւը 1,000,000-ից մինչև 1,500,000 է հասնում։ Նրանք բաժանվում են կոչերների, թափառական ցեղերի, գուրանների վրա, գիւղերում գաղթած ցեղերի վրա, որոնք երկրագործութեամբ են պարապում։ Վօշերների մեծ մասը թափառում է թիւրք-պարսկական սահմանի վրա անցնելով մէկ կողմից միւսի վրա, և իսկապէս չէ ընդունում ոչ սուլթանի և ոչ շահի իշխանութիւնը։ Քառասուն տարի առաջ թիւրքաց կառավարութիւնը այնու ամենայնիւ նրանց անխախտութիւնը մեծ հարուած տուեց, և մտցրեց քուրդերի մէջ, զոնէ ձեւի համար, իր կառավարութիւնը։ Չը նայելով դրան, քուրդերի բնակված ցամաքի մեծ մասի մէջ օտոմաններն իշխանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մէկ հնարագործութիւն, այլ իսկական իշխողները ազգային բէկերն են։ Քառասուն քուրդերը կենքի եղանակով համարեա ոչինչով չեն զանազանվում բեդուիններից, այնու ամենայնիւ քուրդերը նրանցից աւելի անվեհեր և նենգաւոր են, բայց նրանք նոյնպէս հիւրասեր են որպէս արաբները, համարեա միշտ զինաւորված են և հեծած ու միակ իրանց յարմար պարապմունք են համարում յարձակումները և կողոպուտը։ Անասունների հոգատարութիւնը և տնտեսական աշխատանքը, որպէս ստոր պարապմունքներ, կան նանց է թողնված, որոնց հետ, այնու ամենայնիւ, թէ արաբները և թէ քուրդերը լաւ են վարվում։ Հաստատաբան քուրդերը համարեա նոյնքան վայրենիներ են, որքան և թափառականները։

Յոյները հին գաղթականների սերունդներ են, որոնք բնակվել են Արևելքում և ծովափի վրա Կարմանից մինչև Տրապիզոն։ Քիչ բացառութիւններով, նոքա ներկայ ժամանակումն էլ բնակվում են այնտեղ։ Նրանք վայելում էին նշանաւոր կառավարչական ինքնավարութիւն, և այս պատճառով նրանց կարելի է Բ. Կրան ամենագոհ հպատակներ համարել։

Ժամանակակից սիրիացիները—խառնված ցեղ են որոնք կազմվել են Սիրիայի և Պաղեստինայի հին բնակիչներից, խառն արաբների և խալիֆների զօրքերի հետ եկած մահմետականների հետ։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլս, 24 օգոստոսի

Ձեյթունի ապստամբութիւնն կը շարունակուի, թէպէտ հայոց շարժումները մասին ճիշդ տեղեկութիւններ չունինք։ Խօզանի թիւրք լեռնականները որք ժամանակով գրէթէ ինքնազուլ են։ Ձեյթունցիներին նման և յետոյ թիւրքաց կառավարութեան լուծի տակ հնազանդած էին, այժմ ապստամբված են և հայոց հետ դաշնակից եղած։ Այդ ապստամբութեան զուլս եղած է Անմէտ-փաշան որ ժամանակով Խօզանի կառավարիչն էր։ Թիւրքաց լրագիրները այժմ հայերի մասին ոչինչ չեն գրեր, այլ միայն Անմէտ-փաշայի վրա կը խօսին։ Այդ ալ յատուկ նպատակով է. որովհետեւ թիւրքաց կառավարութիւնը բաւական զօրք կուղարկէ այդ կողմեր որ ապստամբութիւնը զսպեն։ Այդ զօրքեր ի հարկէ նախ Ձեյթունցիներու վրա պիտի յարձակին որպէս զի զանոնք տկարացնելով, իրենց դաշնակից Խօզանցիներն ալ տկարացնեն։ Բայց այնպիսի դժուրութիւնով որ հայոց խնդիր չը ծագի և պարզապէս Խօզանցի թիւրքաց ապստամբութիւն համարուի։ Ձեյթունի և Կ. Պոլսի մէջ յարաբերութեան օրինաւոր միջոցներ ալ չը կան դժբաղդապէս. այնու ամենայնիւ, կաշխատին այստեղ որ յարաբերութեան կապեր ունենան և, որպէս կարելի է, ստոյգ տեղեկութիւններ ձեռք բերեն։ Թիւրք լրագիրներ հրատարակեցին թէ Անմէտ-փաշան յառաջանալով

տիրել է Սիւ քաղաքին, բայց յետոյ կայսերական զօրքերը յաջողեցին են յետ փախուցնել զայն գէպի իր լեռները։

Կարինի գաղթականութեան մասին ոչինչ հրատարակութիւն եղած չէր դեռ այստեղ։ Այս շաբաթ առաջին անգամ «Մանգուլէի էֆէրէ» մէջ հրատարակվեցաւ այդ մասին։ Պատրիարք սրբազան հեռագրեր է կարին Յարութիւն եպիսկոպոսին և պատասխան ստացեր է թէ ինք շատ աշխատեւ է հանդարտեցունել ժողովուրդը որ չը գաղթեն, բայց յոյս չունի որ յաջողի։ Պատրիարքը կրկին հեռագրով պատուիրած է որ աշխատի համոզել ժողովուրդին և ապահովացունել որ չը գաղթեն. ինք ալ մի մասնաւոր շրջաբերականով դիմած է բոլոր եւրօպական տէրութեանց ներկայացուցիչներուն և եղելութիւնը յայտնած է։ Այս առաջին շրջաբերականն է որ պատրիարք սրբազանը կը յղէ եւրօպական տէրութեանց դեսպաններուն, Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի վրա կոթնելով։

Խրիմեան հայրիկ անցած կիրակի օր Օրթա-գիւղ և նախորդ կիրակի օր Գուզլինճուզ պատարագ մատոյց և քարոզ խօսեցաւ ժողովուրդին։ Այս կիրակի ալ Մայր-Եկեղեցին պիտի քարոզէ։ Նա իր քարոզներուն մէջ անդադար կը կրկնէ հայաստանի ժողովուրդին թէ վերադարձէ ձեր հայրենիք և զէնք առէք քուրդերուն և չէրկէսներուն դէմ. Կ. Պոլսեցիներուն ալ կը յորդորէ Հայաստան երթալ։ Ուրիշ անգամ ընդարձակ կը գրեմ այստեղ եղած շարժումներու մասին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Բէյտերի ընկերութիւնը» հեռագրում է, որ սուլթանը հաղորդեց ռուսաց կառավարութեանը այն բռնադատութիւնները, որոնց ենթարկվեցին մահմետականները բոլջարացիներից և ինդի-բեց միջոցներ գործ դնել այդ բռնութիւնների առաջն առնելու համար։

—Լրագիրներին հաղորդում են հետեւեալը. «Սալֆէտ-փաշա մի նամակով յայտնեց Միդ-հաթ-փաշային, որ սուլթանը ի նկատի ունենալով նրա կարգ ժամանակ օտարութեան մէջ մնալը, ի նշան իր բարեհաճութեան թող է տալիս Միդհաթ-փաշային վերադառնալ Կ. Պոլս, որտեղ նա ժամանակով կարող է որ և է պաշտօն ստանալ։ Նոյն բովանդակութեան հեռագիր ստացաւ թիւրքաց դեսպանը Լօնդոնում Մուստուրա-փաշա, որ պաշտօնապէս այցելեց Միդհաթ-փաշային և նրան ճաշի հրաւիրեց։ Միդհաթը ընդունեց սուլթանի հրամանը և երկար նամակներ գրեց սուլթանին և Սալֆէտ-փաշային։ Կ. Պոլս դնալուց առաջ Միդհաթը պէտք է ստանայ պատասխան իր նամակներին, որոնցով նա ոչինչ պայման չէ դնում իր վերադարձի համար, այլ բացատրում է իր հայեաքները Թիւրքիայի ներկայ դրութեան մասին։ Առժամանակ Միդհաթ-փաշա ուղևորվում է Փարիզ։

—Վիեննայից հեռագրում են, որ թիւրքաց կանոնաւոր զօրքերը, որոնք մասնակցում էին ապստամբութեանը, զգում են իրանց զէնքերը և անձնատուր են լինում աւստրիացիներին։ Այդ զօրքերին Ալբանիայով ուղարկում են Կ. Պոլս։

—Ալեքսանդրիայի «Պաշտօնական Լրագրում» տպված է խեղդիկ հրամանը Նուբար-փաշային։ Հրամանի մէջ ասված է, որ խեղդիկը այսուհետև գործերը կը կառավարէ մինիստրների խորհրդի օգնութեամբ և Նուբար-փաշայի աշակցութեամբ։ Հրամանի մէջ որոշված է մինիստրների գործունեութեան շրջանը։ Նոքա պէտք է համերաշխաբար պատասխանատու լինեն։ Նուբար-փաշան յայտնում է, որ ֆինանսների մինիստրի պաշտօնը այնպիսի անձի կը յանձնվի, որ վայելում է ընդհանուր յարգանք և հաւատարմութիւն։

—Էրզրումից մեղ գրում են հետեւեալը. «Այս օրերս քրիստոնէիցմէ բաւական գաղթողներ եղան, բայց առանց բիւթի, որովհետեւ նահանգապետը բիւթ տալ չուզեր և երթնողներուն ալ հակառակութիւն ընող ու չի կայ։ Օվայի գիւղացիները գրիթ աման օր նահանգապետին աղերսագիր կուտան, «չենք կենար, կը գաղթենք» ըսելով, նա ալ որոշ և զոհացուցիչ պատասխան մի չի տար։ Իլնճայի և Ջինիսի գիւղերի կողմերը գտնվող կազակ ձիաւոր զօրքը երեք օր յառաջ բոլոր ալ 300-ի չափ գալով Կարս գացին։ Այլազգիք մամիշլապիս Ջինիսի քահանայի տունը մտանելով շատ գէշութիւններ ըրած են, մինչև անգամ կրսնն որ չուրթիւն,

սպանութիւն ալ եղել է. ասօր համար երէկ 40—50 հատի չափ կազակ նորէն ղրկվեցաւ որ երթան յանցաւորները բռնեն բերին։ Ռուսը դեռ ևս քաղաքէն չկած ասանկ գաղանութիւններ որ կըլլայ, հապա եղնիկէն յետոյ ինչեր չլլար։»

—«Голосъ» լրագրին գրում են Էրզրումից որ նորերումս այդ քաղաքի հայոց գերեզմանատան մէջ կատարվեցաւ այնտեղ թաղված ռուս սօլդատների, օֆիցերների և բժիշկների յիշատակին դրվող արձանի հիմնադրութեան հանդէսը։ Արձանը վերջացրած կը լինի այս սեպտեմբեր ամսին։

—Մայրաքաղաքների լրագիրներին հեռագրում են Բերլինից, որ այնտեղի համալսարանի ռուս ուսանողների աներում պօլիցիան հետախուզութիւններ անելով, մի քանի ուսանողները կալանաւորվեցան։

—«Обзоръ» լրագրին մասնաւորապէս հեռագրում են Բաթումից հետեւեալը. «Այսօր, սեպտեմբերի 4-ին, թիւրքերը բոլորովին դատարկեցին Բաթում։ Իշխան Միրսիկ այսօր թողեց քաղաքը և ճանապարհ ընկաւ։ Նոր նահանգապետ Կօմարով մտաւ իր պաշտօնը»։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 սեպտեմբերի։ Երկրորդ ներքին 5% փոխառութեան տիրածք որ կատարված է սեպտեմբերի 2-ին։

№ Սերի	№ Տոմսակի	Տարած գումար
6,439	33	200,000
1,536	28	75,000
13,316	11	40,000
2,585	47	25,000
3,549	41	
16,631	40	10,000
2,198	32	
18,636	47	
7,931	22	
5,738	5	8,000
18,504	30	
7,609	4	
6,879	33	
1,308	34	
15,310	20	
10,062	14	5,000
4,072	16	
10,717	34	
8,015	18	
939	27	
7,204	30	
12,904	31	
19,031	26	
11,810	10	
12,050	15	
8,205	29	
11,687	35	
1,658	30	
17,833	49	
18,602	34	1,000
11,657	5	
6,162	11	
6,128	38	
1,516	12	
17,190	13	
2,266	37	
18,152	3	
14,474	33	
2,599	14	
3,775	27	

ԲԵՐԼԻՆ, 4/16 սեպտեմբերի։ Գերմանական պարլամենտը ձեռք տուեց սօցիալիստների դէմ յորիված պրօէկտի քննութեանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 4 սեպտեմբերի։ Այսօր հասան Ս. Պետերբուրգ Իզմայէլեան և Ֆինլանդեան գունդերը։ Ընդունելութիւնը հանդիսաւոր էր. հերոսները պատկվեցան յաղթական դափներնով։ Նրանց ճանապարհը ծածկվում էր անձրևի պէս ընկնող ծաղիկներով և փունջերով։ Ընդհանուր ոգևորութիւն էր տիրում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 5 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ., երկրորդ 95 ռ. 87 Կ., երրորդ 95 ռ. 75 Կ., չորրորդ 95 ռ. 50 Կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 234 ռ., երկրորդ 230 ռ. 25 Կ., արևելեան 92 ռ. 50 Կ., սոկի 7 ռ. 99 Կ.։

Տրամադրութիւնը հանդարտ է։

3-3

Խ. Խաչատուրեան

2-3

18,603 . . . 48 . . . 1,000

ТИП. ПРОТ. ТЕАТРА ВЪ СОБ. ДОМЪ.

Ա. Մահտեսի Յակոբեանց

2-2

ՏԵՍՈՒՆ ԱՔ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՅ

1—

6-6

2-2

ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՅՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-
ԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔՈՂԱՔԻ
ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

[illegible]

2) Համառոտ մանկավարժական
թիւն. գինն է 1 ր. 50 կ.:

1 2

Լոյս տեսաւ

«ՆԱԽԳԱՀԱՐՄՈՒՆԻ»

«Въ Тифлисъ.—Кавказскія книжная тор-
говля Э. П. Грикурова.»

Պ. Նազարեանը

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ